ԵՐԵՎԱՆԻ ԱՎԱԳԱՆՈՒ
ԻՄ ՔԱՅԼԸ ԽՄԲԱԿՑՈՒԹՅԱՆ ԱՆԴԱՄ
ՊԱՐՈՆ Գ. ԵՐԻՑՅԱՆԻՆ

Հարգելի պարոն Երիցյան.

Ի պատասխան Ձեր 07.12.2020թ. գրության՝ տեղեկացվում է, որ Երևան համայնքի 2019թ. ճշտված բյուջեով աշխատակազմի մասնագիտական զարգացման գծով նախատեսված 38,590.4 հազ. դրամի դիմաց փաստացի ծախսը կազմել է 6,910.0 հազ. դրամ, Երևան համայնքի 2020թ. ճշտված բյուջեով, վերը նշված ծախսի գծով, նախատեսումը կազմում է 16.578.7 հազ. դրամ, իսկ փաստացի ծախսը 5,442.7 հազ. դրամ:

Միաժամանակ տեղեկացվում է, որ Երևան համայնքի 2021թ. բյուջեի նախագծով՝ աշխատակազմի մասնագիտական զարգացման մասով, նախատեսվում է 66,982.0 հազ. դրամ, այդ թվում՝ համայնքային ծառայության վերապատրաստումները և ըստ ոլորտների պահանջվող մասնագիտական վերապատրաստումները, որի արդյունքում նախատեսվում է բարձրացնել աշխատակազմի արդյունավետությունն ի շահ Երևան համայնքի զարգացման:

«Համայնքային ծառայության մասին» օրենքի 20-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն յուրաքանչյուր համայնքային ծառայող առնվազն երեք տարին մեկ ենթակա է պարտադիր վերապատրաստման: 2020թ. Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի կառուցվածքային և առանձնացված ստորաբաժանումների թվով 444 համայնքային ծառայող վերապատրաստվել է՝ ըստ ընդհանուր և իրավական, ֆինանսատնտեսական, քաղաքաշինության և կոմունալ տնտեսության, սոցիալական հարցերի բնագավառների:

«Համայնքային ծառայության մասին» օրենքի 20-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն համայնքային ծառայողների վերապատրաստումն անցկացնում է օրենքով սահմանված կարգով ընտրված կազմակերպությունը:

2020թ. համայնքային ծառայողների մասնագիտական վերապատրաստման ծառայությունների մատուցման համար հայտարարված մրցույթի արդյունքում հաղթող է ճանաչվել «Մաստեր Սթայլ» ՍՊԸ-ն (Տնօրեն՝ Արթուր Սարգսյան, հեռախոս՝ 093-99-88-87, ք. Երևան, Սարմենի 1, 2/1 տարածք, ծառայողական հեռախոս՝ 094-888-725):

2021թ. Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի կառուցվածքային և առանձնացված ստորաբաժանումների թվով 181 համայնքային ծառայող ենթակա է վերապատրաստման՝ ըստ վերը թվարկված բնագավառների, որի արդյունքում քաղաքապետարանն ակնկալում է համայնքային ծառայողների մասնագիտական գիտելիքների և աշխատանքային ունակությունների կատարելագործում:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԱՐԱՆ